

ԿՅԱՆՔԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՈՎ

Posted on May 25, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



(Պողոս Գուլբեյանի ծննդյան 85 և գրական գործունեության 65 ամյակների առիթով)**Ալեքսանդր Թոփչյան, Ֆրանսա, 11 Մայիս 2021**

Գրաքննադատի և լրագրողի իմ գործունեության ամբողջ ընթացքում կտրականապես դեմ եմ եղել «չեմպիոնական» արատավոր այն սկզբունքին, որ շատ հաճախ մեզանում կիրառվում է արվեստի և գրականության գործիչների վաստակը գնահատելիս:

«Ամենամեծին» և «ամենատաղանդավորին վերջերս ավելացավ «ամենահանճարեղը», կարծես հանճարեղ լինելը քիչ է և դեռ պետք է մի բան էլ վրան ավելացնել:

Պողոս Գուլբեյանի գրականությանը ծանոթ և ըստ արժանվույն գնահատել իմացող գրաքննադատը, ենթադրում եմ, պիտի մի պահ տրվի նման գայթակղությանը՝ նրան որակելու որպես Սփյուռքի գրականության անցած հիսուն տարիների ամենա... Չենք թաքցնում, այդ գայթակղությունը մեզ էլ է փորձության ենթարկել, բայց տեղնուտեղը հասկացել ենք, որ ավելի համոզիչ կլինի, եթե ընթերցողին ներկայացնենք գրողի այն արժանիքները, որոնք քիչ էր մնում մեզ ստիպելն ազդարարելու նրան «ամենա...»:


Իմ առաջին ծանոթությունը Պողոս Գուլբեյանի գրականության հետ տեղի ունեցավ համալսարանական տարիներին, երբ մեկը մյուսի ետևից պարզապես կլանում էի սփյուռքահայ գրականության պաշտոնապես արտոնված, իսկ հիմնականում արգելված գրականությունը: Ակամայից վերջիններիս թվում էր հայտնվել նաև նա, քանի որ իր առաջին գործերը տպագրվում էին Բեյրութի «Սփյուռք» շաբաթաթերթում՝ արգելված մամուլ, որը միայն հատուկեևտ մարդկանց էր մատչելի: Այդ պատմվածքներն անմիջապես գրավեցին իմ ուշադրությունը, և հետագա տարիներին ես պիտի այդ անունը փնտրեի մամուլում, իսկ ավելի ուշ՝ առանձին գրքերով:

Նրա գրականությունը եղավ եզակի մի երևույթ ոչ միայն սփյուռքի, այլև ընդհանրապես քսաներորդ դարի հայ գրականության մեջ: Եզակի նրանով, որ գրողը ծնվում էր ոչ թե Բեյրութի, Փարիզի, Թեհրանի, Պոլսի կամ Միացյալ Նահանգների սփյուռքահայ մշակութային անդաստաններում, ոչ թե եվրոպական գրականությունների բարենպաստ և սնուցանող հարևանությամբ (ինչպիսին էր Շահնուրի, Շուշանյանի, Որբունու կամ Սարաֆյանի գրականությունը, ովքեր ֆրանսիական հզոր գրականության կողքին և զուգահեռ ստեղծեցին իրենցը և զուտ հայկականը), այլ աֆրիկյան հետամնաց երկրի մշակութային անապատում, որտեղ այդ տարիներին, 60-70-ականներին, «գրականություն» բառն իսկ հազիվ թե գործածվեր:

Մի առիթով Պ.Գուլբեյանի ստեղծագործությունները համեմատել ենք Մաքսիմ Գորկու և Ջեյ Լոնդոնի հետ, հեղինակներ, ովքեր գրականություն եկան ոչ թե մշակութային ակունքներից, այլ, ինչպես ասվում է, կյանքի թելադրանքով: Գրական «դպրոցների» դասերը սերտած գրողն իր հետ բերում է հաստատված-անխախտ ավանդներ, որոշակի-անզանցելի գեղագիտություն, ժամանակի ոգով ձևավորված աշխարհայացք, որոնք իրենց անջնջելի հետքն են թողնում նրա գործերում: Եվ եթե անգամ նա զորավոր

անհատականության տեր է և իր անջնջելի դրոշմն է դնում իր ստեղծածի վրա, ապա դարձյալ մնում է որոշակի ժառանգականության սահմաններում: Մինչդեռ, Մ. Գորկու բնորոշմամբ իսկ, կյանքի դժվարին «համալսարաններում» ուսանած գրողն սկսում է բառացիորեն ճերմակ էջից, որոշակի ժամանակի և որևէ վայրի կամ երկրի «սոցիալական պատվերի» հրահանգով: Նա ինքն է ստեղծում իր լեզուն, ոճը, ճաշակն ու գեղագիտությունը, իր աշխարհայացքն ու գաղափարախոսությունը: Չգիտեմ, եթե նա Բեյրութից ոչ թե Սիերրա Լեոնե, այլ եվրոպական որևէ բարգավաճ, մշակութային

հարուստ ավանդներ ունեցող երկիր գնար, նրանում դարձյա՞լ բնական ցանկություն կառաջանար գեղարվեստորեն վերարտադրել տեսածը, բայց փաստ է, որ աֆրիկյան իրականությունը և հատկապես այնտեղ մոլեգնող կոռուպցիան նրանում արթնացրեց և ձևավորեց գրողին, հմուտ արձակագրին, պատմվածքի վարպետին:



Պատմվածքի ժանրը ծանր փորձություն է գրողի համար` անկախ նրա բնատուր կարողություններից: Առավել դժվար` երբ առաջին քայլերդ պատմվածքով ես անում: Սակայն բազմիցս ապացուցված այս ճշմարտությունը, հավանաբար, Պ. Գուբեյանի համար չէ: Նրա առաջին իսկ փորձերը զարմացնում են ձևի կատարելությամբ, հղկված ոճով, սուր դիտողականությամբ և գրավիչ պատումով: Երբ կարդում ես նրա առաջին ժողովածուն, թվում է թե չորրորդիինգերորդ գիրքն է, և որ հեղինակն արդեն հասցրել է գրական լուրջ փորձառություն ձեռք բերել, մշակել սեփական ոճն ու լեզուն:

Առանձին խոսակցության նյութ է Պողոս Գուբեյան արձակագիր-մտավորականի քաղաքական-հասարակական հստակ դիրքորոշումը նկարագրվող իրականության հանդեպ: Չմոռանանք, որ նա հայտնվել էր մի երկրում, մի ժողովրդի մեջ, որը հարյուրամյակներ շարունակ կողոպտվել ու ստորացվել էր եվրոպացի գաղութատերերի

կողմից, իսկ ձևական անկախությունից հետո փաստորեն ոչինչ էր փոխվել, քանի որ այս անգամ հարստահարողներն օտարները չէին, այլ սեփական ժողովրդի ծոցից ելածները, որոնք իրենց անգթությամբ գերազանցում էին նախորդներին: «Մենք՝ սևերս իրարու հետ շատ ավելի անխղճորեն, շատ ավելի շնականորեն կը վարվինք, քան մեր արգահատած սպիտակամորթերը», - խոստովանում է սևամորթ վարչապետը «Փտախտ» վեպում: Ասում է և ասածն ապացուցում՝ անհագորեն թալանելով արդեն բազմիցս թալանված ժողովրդին:

Բնական է, որ ողբերգական պատմությունն ունեցող ժողովրդի զավակն իր համակրանքը պիտի արտահայտեր ճշվածների և հարստահարվածների հանդեպ: Եվ եթե այս տեսանկյունից նայենք Պ.Գուրբեյանի գրականությանը, ապա նրան կարող ենք համարել՝ 1961թ. անկախությունն ստացած աֆրիկյան այդ երկրի գրականության՝ առնվազն հիմնադիրներից մեկը, եթե ոչ հիմնադիրը: Թող տարօրինակ չհնչի այս հայտարարությունը, բայց երբ կարդում ես նրա առաջին երեք գրքերը՝ պատմվածքների ժողովածուները, ապա փաստում ես, որ այնտեղ գերազանցապես ներկայացված են այդ երկրի մարդիկ, նրանց կյանքը, նրանց խնդիրները, անշուշտ, դիտված հայ մտավորականի աչքերով, գրված հայերեն, սակայն նույն սրտացավությամբ, ինչն անպայման պիտի ունենար այդ երկրի դժվարին ճակատագրով մտահոգված հայրենասեր քաղաքացին:

Սա նշանակում է նաև, որ Պ.Գուրբեյանը, որպես գրող, առաջին իսկ քայլերից հայտնվել է «գետտոյական» փակուղուց դուրս: Այս բնորոշումը 60-ական թվականներին շրջանառության մեջ դրվեց՝ որպես հոմանիշ նեղ-ազգային մտածողության, որն այդ տարիներին իշխում էր սփյուռքահայ գաղթօջախներում: Արդյոք օտար հո՞ղն էր, թե՞ կատարելապես ուրիշ նյութը, թե՞ գրողի մարդկային տեսակը, որ օգնեցին նրան միանգամից հայտնվելու նման մտայնությունից դուրս, բայց փաստ է, որ նրա՝ գրողի հայացքը երբեք ոչնչով կաշկանդված չի եղել: Իսկ ավելի ուշ, հայկական թեմաներին նվիրված «Merci beaucoup, ասպետական Ֆրանսա» և «Փասփորթ» գրքերում հանդիպում ենք գրողական մի լայնախոհության, որը սփյուռքահայ գրականության մեջ հատուկ ենտ հեղինակների գործերում կարող ենք տեսնել:

Թվում էր թե արձակագիրը, հեռանալով այդ թշվառ երկրից և հաստատվելով Միացյալ Նահանգներում, վերջնականորեն հրաժեշտ է տվել «աֆրիկյան» շրջանին և, իր նկարագրին հավատարիմ՝ մխրճվել նոր՝ ամերիկա-հայկական, լուսանշելեսյան իրականության մեջ, շարունակելով մեզ զարմացնել իր տաղանդի անսպառ դրսևորումներով: Եվ, իսկապես, «Պայթումը լռած թնդանոթներու» և հատկապես «Ֆրիվեյ» վեպը, մի նոր շրջան են նշանավորում ոչ միայն նրա, այլև սփյուռքահայ արձակում: Այս նոր միջավայրում Պ.Գուրբեյանը «հայկական» նյութին մոտեցավ «օտարը» հիմնավորապես յուրացնելուց հետո, արդեն որպես փորձառու արձակագիր, վերստին ապացուցելով, որ կարող է միանգամից խորանալ հարցի բուն էության մեջ:

Եվ հանկարծ, լիովին անսպասելի, Պ.Գուլբեյանը վերադառնում է աֆրիկյան իրականությանը՝ 2003թ. տպագրելով «Փտախտ» վեպը: Համաշխարհային գրականության պատմությունը բազմիցս վկայել է, որ վիպական ծավալուն երկերը չեն կարող հենց այնպես, պահի թելադրանքով գրվել: Ժամանակի բովով անցած որոշակի դրդապատճառներ են պետք դրա համար՝ քաղաքական, հասարակական, վերջապես, անձնական... որոնք հեղինակին ստիպում են նստել ճերմակ էջի առջև ու ստեղծել մի երկ, որն առնվազն նրա համար ծրագրային նշանակություն ունի, որը չգրել չէր կարող:



Պ.Գուլբեյանն իր պատմվածքներում արդեն հիմնովին և առավել քան առարկայական ներկայացրել էր հարստահարված երկիրն ու նրա բնակիչներին: Պատմվածքներ, որ գրված էին վավերաթղթի համոզականությամբ, ասես լրագրողական հավաստի ռեպորտաժի և գեղարվեստորեն համոզիչ հորինվածքի սահմանագծին գտնվեին: Յուրատեսակ մի ժանր, որ հեղինակից պահանջում է ոչ միայն քաղաքացիական հստակ դիրքորոշում (քանի որ նա պատասխանատու է իր ստեղծածի համար), այլև գրողական որոշակի ունակություններ: Իսկապես, ինչո՞ւ նա պահանջ ունեցավ երկրորդ անգամ ապացուցելու արդեն մեկ անգամ անժխտելիորեն ապացուցվածը:

Հնարավորինս ճշգրիտ պատասխանելու համար այս հարցին, ուշադրություն դարձնենք աֆրիկյան առաջին շրջանում ստեղծված գործերի և վեպի միջև նկատվող ժանրային ակնբախ տարբերություններին: Պատմվածքներն ասես գրված են առաջին իսկ տպավորության անմիջական ազդեցությամբ, այդ պատճառով էլ շատ հաճախ դեպքի վայրից արվող ռեպորտաժների տպավորություն են թողնում, մինչդեռ վեպը՝ տասնամյակների ընթացքում առաջացած նստվածքների հիման վրա գրված, քաղաքական-հասարակական լայնակտավ մի գործ է, որտեղ գեղարվեստական հորինվածքը մշտապես ուղեկցվում է հասարակագետլրագրողի վերլուծումներով, իսկ

տեղ-տեղ կրթութիւն հրապարակախոսութեամբ, մի երևույթ, որն իսպառ բացակայում էր պատմվածքներում, որտեղ ընթերցողին գեղարվեստորեն համոզելուց հետո, ազատ հնարավորություն էր տրվում անսխալ հետևություններ անելու:

Մեր կարծիքով, հեղինակն այս քայլին է գնացել մի պարզ պատճառով, իր իսկ հայրենիքում՝ անկախացած Հայաստանում տեսնելով նույնը, ինչի մասին արդեն գրել էր ավելի քան քսան տարի առաջ: Եթե մեր ենթադրությունը համոզիչ չէ, ապա կուզեինք, որ պատասխան տրվի հետևյալ հարցին. եթե պարկեշտ, քաղաքացիական բարձր գիտակցությամբ օժտված գրող-մտավորականը չէր կարող անտարբեր լինել ուրիշի ցավի հանդեպ, ապա կարո՞ղ էր անտարբեր մնալ՝ տեսնելով իր հայրենիքում ծավալվող միևնույն կոռուպցիան, այն կոռուպցիան, որի մասին առաջին իսկ օրերից բարձրաձայնում էին նույնիսկ պետության առաջին դեմքերը, և որը գնալով ահագնացավ ու վերջը չի երևում, այն կոռուպցիան, որի մասին այսօր խոսվում է գիշերուզօր, խոսվում է, բայց կարծես ամեն ինչ մնում է նույնը, իսկ երբ խոսքը գործ չի դառնում, վերածվում է զավեշտի՝ հիշեցնելով կռիվյան առակը, երբ գող կատվի գլխին շերեփով մի լավ հասցնելու փոխարեն, խոհարարը քարոզ է կարդում, իսկ կատուն լսում է և շարունակում անվրդով լափել...

Արդ, կարո՞ղ էր արդյոք Պ. Գուբեյանի նման անարդարության հանդեպ անհաշտ գրողը, անկաշառ մտավորականը, վերջապես հայ մարդը անտարբեր լինել և չտեսնելու դնել համակարգված կոռուպցիայի միևնույն դրսևորումները Հայաստանում: Ո՛չ, նա չէր կարող լռել, նա պիտի արտահայտվեր: Բայց ինչպե՞ս, երբ Սփյուռքը, վերևից իջեցրած կամ, ինչպես վեպում է ասվում՝ «երկնաքարի պես անջրպետեն ինկած անկախության» առաջին իսկ օրերից, համառորեն ու հերոսաբար չտեսնելու էր դնում հայրենիքում, օրնիբուն, տեղի ունեցող այլանդակությունները, իսկ երբ որևէ մեկը, մանավանդ հայաստանցի, համարձակվեր աղաղակող փաստերից թեկուզ մեկը բերել, տեղնուտեղը բերանը կփակեին, ասելով. «Հայրենիքի մասին ինչո՞ւ գեշ կը խոսիս»: Ահա ինչու, սրտացավ գրողը հայրենիքի մասին «գեշ չխոսելու», բայց և այնպես տագնապահարույց ճշմարտությունը «խոսելու» համար առաջնորդվեց՝ «կուժ քեզ եմ ասում, կուլա դու լսիր» հայկական ժողովրդական ասացվածքի տրամաբանությամբ:

«Փտախտ»-ի վիպական գործողությունները տեղի են ունենում Հայաստանից հազարավոր կիլոմետրեր հեռու, աֆրիկյան Կերա Լեմոն պետությունում, աշխարհագրական հորինովի անվանում, որը շատ նման է Սիերրա Լեոնեին, Աֆրիկայի արևմուտքում ընկած ծովափնյա մի երկիր, որտեղ, տարիներ շարունակ ապրեց, աշխատեց և մեր լավագույն արձակագիրներից մեկը դարձավ վեպի հեղինակը: Այսպիսով, «կուժը» տվյալ դեպքում Սիերրա Լեոնեն է, իսկ «կուլան»՝ Հայաստանը: Վեպի միակ հայկական տարրը գլխավոր հերոս Վազգենն է, որը գործ է հիմնել Կերա Լեմոնի մայրաքաղաքում և ձգտում է ոչ միայն օրինական ճանապարհով դրամ վաստակել, այլև, բարձրորակ բանվորներ պատրաստելով, նպաստել երկրի

տառաչընթացին: Սակայն լիբանանյան մաֆիան, որ քաղցկեղի պես իր շոշափուկներն է տարածել երկրով մեկ և որոշակի ազդեցություն ունի իշխանական ամբողջ համակարգի վրա, մտադիր է նրան երկրից վտարել: Բարեբախտաբար, Վազգենը



մենակ չէ իր արդար պայքարում: Կառավարության ազդեցիկ դեմքերից մեկը կարողանում է պաշտպանել նրան և հնարավորություն տալիս հայ մասնագետին իր օգտակար գործն անելու ի բարօրություն երկրի: Բայց, ինչպես գլխավոր հերոսն է ասում. «Պայքարը դեռ նոր պիտի սկսեր»:

Պետական հեղաշրջումները սովորական երևույթ են անբուժելի կոռուպցիայով վարակված աֆրիկյան երկրների համար: Կերա Լեմոնում էլ հերթական դավադրությունն է հասունանում: Իշխանությունը գրավելու անհաջող փորձից հետո, հեղաշրջում է իրագործում քաղաքապետարանի նախկին ոստիկանը, որն իբրև թե պայքարում էր հանուն ժողովրդի և հանուն արդարության: Սակայն փորձը ցույց է տալիս, որ ամենամեծ գողերը հենց սրանք են, որ իշխանությունը զավթելուն պես, գործում են «բերան ունես՝ պիտի ուտես» անասնական սկզբունքով: Բայց երանի՜ բավարարվեին «մի փոր հացով»: Արդարության այս ջատագովների ախորժակը բացվում է ուտելու հետ, բացվում է ու չի՛ փակվում:

Վեյնը ընթերցելիս շարունակ այն տպավորությունն ես ունենում, թե նկարագրվող գործողությունները ծավալվում են Հայաստանում: Օրինակ. «...խումարի և բախտախաղի մեքենաներ տեղավորվեցան մինչև քաղաքին ամենախուլ անկյունները,

Եկեղեցիներու գավիթն ու արքայապետի հյուրընկալումները, մինչև կեթոլիկ պորտը»: «Բնիկը ե՞րբ էլեքտրականություն ունեցեր է որ: Թող վերադառնա ավանդական իր նախկին ուրախ, անհոգ կենսաձևին, երբ անտառներու խորը, հողաշեն հյուղակներուն բակը, բոցավառվող խարույկի շուրջ թամ-թամ կը զարներ...», - ասում է սեփական ժողովրդի լույսն ուղղակի և փոխաբերական իմաստով մարդը նախագահը: («Մեր «ազատատենչ ու արդարամիտ» հեղափոխականները, անկախությունից անմիջապես հետո, մեզ էլ ստիպեցին տարիներ շարունակ «խարույկներ» վառել ու «թամ-թամ» զարկել, և ժողովրդին անհաշվելի նյութական ու բարոյական վնասներ պատճառած այս ոճրագործության համար առ այսօր ոչ ոք պատասխան չի տվել: Ավելին, մեղավորները մնալով անպատիժ, ամենայն լկտիությամբ և անողոքաբար քննադատում են իրենց հաջորդածներին): Կամ թե՛ բախտի բերմամբ նախագահ դարձած նախկին ոստիկանի մասին այսպես է գրում. «Չկար ձեռնարկություն մը որու մեջ զառամած ծերուկը փայտեր չ'ըլլար»: Իսկ լիբանանյան մաֆիան կարողանում է «ձյունասփռիչ մեքենաներ վաճառել արևադարձային երկրին», որտեղ չգիտեն, թե ինչ բան է ձյունը: Այս անհեթեթ գործարքը շատ հեռու չէ մեր տխրահռչակ բիոգուգարաններից:

Ի վերջո, երկիրը հիմնավորապես թալանելուց, «մերկացածներին ավելի մերկացնելուց», հեղինակի ասելով՝ «քարե դարից քաքի դարին» հասցնելուց հետո, ողբալի պայմաններում իր հոգին է ավանդում հերթական բռնակալը: Վեպն ավարտվում է գավեշտալի մի տեսարանով, երբ նա, վախանվելուց առաջ, գերիական մի տեսիլք է ունենում՝ պատկերացնելով իր հանդիսավոր թաղումը. «Սինիք քմծիծաղով, մարեշալի շողշողուն համազգեստը հագին... կը նախագահեր իր իսկ ազգային շքեղ թաղումին, մասնավոր ոգևորությամբ դիտելով ժողովրդային հարգանքի վերջին արտահայտությունը հանդիսացող տողանցքը, հազարավոր փորը ուռած, ոտաբոպիկ, մերկ ու նոթի, աչքերը խռոչ ինկած, քաղցեն գալարվող կերա լեմոնցի մանուկներու: Գոմանտոյի համաչափ վազքով անցնող կմախքներու գունդը ազգընտիր նախագահին վրա խոր տպավորություն գործած էր»: Բռնակալը «հանգեալ ի Տեր», բայց փտախտը չմեռավ, այլ շարունակելու է մոլեգնել ավելի ուժգին: Հեղինակը կարծես համոզում է, որ այս աշխարհում ոչինչ այդքան համամարդկային չէ, որքան կոռուպցիան: «Փտախտին դեմ նույնիսկ գերպետություններու հյուլեական զրահը անկարող կը մնար: Փտախտը ուներ իր ներքին օրինաչափությունը, տրամաբանելու ու գործելու գաղտնի օրակարգը»:



Հ.Գ. Հողվածի

սկզբում խոստացանք վերլուծական համոզականությամբ ապացուցել հորեյար գրողի եզակիությունը: Հուսանք մեզ հաջողվեց: Այնուհանդերձ, կուզեինք ավելացնել չափազանց պերճախոս մի փաստ: Պ.Գուբեյանին ինդրել էինք ուղարկել իր հրատարակված բոլոր գրքերի ցուցակը՝ տեսնելու, որ ոչինչ չի վրիպել մեր ուշադրությունից: Պարզվեց, որ իսկապես անցած տասնամյակների ընթացքում նրա հրատարակած բոլոր գրքերը ոչ միայն ամենայն ուշադրությամբ և հաճույքով ընթերցել ենք, այլև դրանցից մի քանիսը գրախոսել մամուլում: Սակայն մեզ անակնկալ էր սպասվում:

Ցուցակը միայն ծանոթ գրքերով չէր կազմված, այլև անտիպներով, որոնց քանակը չի գիշում տպվածներին: Վեպեր, պատմվածքների ժողովածուներ, հրապարակախոսություն, պատմական ուսումնասիրություն և նույնիսկ՝ մանկապատանեկան արձակ... Հայերեն և անգլերեն...

Գնալով ավելի եմ համոզվում, որ Աստված ստեղծագործողին տաղանդ պարգևելիս, ասես համապատասխանաբար նրան զրկում է նախաձեռնելու, սեփական գործն առաջ տանելու կարողությունից, և որքան ավելի տաղանդավոր, այնքան ավելի անկարող յուր երկնածն արժևորելու և բարձր պարգևների ու գնահատությունների արժանացնելու: Սա առավել քան համոզիչ է թվում մանավանդ այն աչք ծակող և անդուլ (ու անդուր) ջանքերի կողքին, որոնք բնությունից ժլատորեն օժտված որոշ անձինք Սփյուռքում և Հայաստանում կիրառում են Պառնասի լանջերին հնարավորինս բարձր ու տեսանելի տեղավորվելու համար: Եվ տեղավորվում են, և արժանանում, շատ հաճախ՝ առատորեն, ստանալով այն պարգևները և նյութական խրախուսանքը, որոնք արդարացիորեն պիտի հասնեին տաղանդին: Ավաղ, այսպես եկել է, այսպես էլ պիտի գնա, լկտի միջակությունը այսուհետ էլ պիտի շարունակի իր «փառքը քաշել պարանով...» (Ե.Չարենց), մեղա՛, «կանաչով», իսկ մենք մշակութային այս մշտական ոտնձգությունները կարող ենք չեզոքացնել միայն տաղանդներին արժանին մատուցելով, տվյալ դեպքում ոչ միայն մեր երախտիքը հայտնելով հրաշալի արձակագրին, պարկեշտ մտավորականին իր ծննդյան 85 և գրական անընդմեջ գործունեության 65 ամյակների առթիվ, այլև օգնելով, որ հնարավորինս շուտ ընթերցողին ներկայացվեն նրա անտիպները՝ համոզված, որ դրանք առնվազն նույնքան արժեքավոր են, որքան մինչ այսօր հրապարակվածները:

Վարձքդ կատար, հարգարժան Վարպետ, սիրելի Գրչեղբայր:

There are no comments yet.